

կ'ունենան, որ առջևի կողմէն դէպ 'ի ետեւի կողմը կը բարձրացնեն զանոնք : Լ'էկոծութեանց միջոց ալիքներ տեսնուած են 60 մեզր բարձրութեամբ :

Պայքալ լիճը ձևացած է այն տեսակ հրաբխային ճնշմամբ մը, որով որ Կասպից ծովը ձևացած է : Իր ներկայացուցած արտաքոյ կարգի երևոյթները բազմաթիւ են, որոնք քանի մը տարիէ 'ի վեր մանրամասն քննութեանց առիթ եղան, և որոնց գլխաւորները յօդուածիս մէջ դրինք :

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ձինաստանի բնակչաց բիւր :

Ձինաստանի ընդարձակ պետութեան բնակչաց թուոյն վրայ ինչուան հիմն ստոյգ տեղեկութիւն մը չկար, եղածներն ալ իրենց հնութեամբը այսօրուան օրս այնչափ յարգ մը չունէին : Բայտ վերջին աշխարհագրին, զոր 1815 տարւոյն ընել տուաւ Վիա-Վինկ կայսրը, Ձինաստանի ու իր գաղթականութեանց բնակիչները 363,784, 360^ե կը հասնէին : Լ'յս հաշուին մէջ չէին մտնէր հարկատու երկիրները, ինչպէս Ղոչինչին, Ղոն-Վինկ, և այլն :

Լ'յն միջոցէն ետքը՝ ժողովուրդը խիստ զգալի կերպով բազմացաւ : Վիա-Վինկ կայսեր յաջորդը, որ 1820^են կայսերական գահը ելաւ, նոր աշխարհագիր մը պատուիրեց որ ըլլուի . բայց գործոյն լրումը չտեսած՝ վախճանեցաւ 1840^են :

Լ'ըդի կայսրն ալ փոյթ տանելով այս բանիս, ուրիշ երրորդ աշխարհագիր մը սկսաւ 1842^են, որ յետ քանի մը անգամ ընդհատելու, վերջապէս 1857^են սկիզբը լմնցաւ : Լ'յս հաշուին համեմատ՝ 415 միլիոն բնակիչ ունի Ձինաստան : Եւ թէպէտ ըստ ստուգադոյն կարծեաց հմուտ մարդիկներու աս հաշուէն 6-8 միլիոն մը վերցնելու է, սակայն դարձեալ 400 միլիոնէն աւելի կ'իյնայ :

Իսկ Բեքին մայրաքաղաքին բնակչաց թիւը աւելի ճիշդ կը սեպուի . և է 1,648,814 հոգի : Եւ թէ որ քաղքին հետ առնուին իր արտաքին արուարձաններն ու Տաշին և Վան-բիհ ըսուած քաղաքագիւղերն ալ, զորոնք Ձինք մայրաքաղաքին մաս կը համարին, բնակչաց թիւը կ'ելլէ 2,553,159 հոգի :

Ձինաստանի վարի աստիճանի մարդկանց անհրաժեշտ ընկեր ըլլալով աղքատութիւնը, գինովութիւնը գրեթէ ճանցուած ախտ չէ աս ազգին մէջ : Փոխադրական հիւանդութիւնները, բաց 'ի ծաղկէն, շատ նուազ են հոն . ուրիշ կողմանէ ալ չին կանանց որդեծնութիւնը անհաւատալի կերպով բեղնաւոր է : Բայտ դիւրին է հասկընալ թէ այսպիսի երկրի մը բնակիչներուն թիւը օր օրուան վրայ արտաքոյ կարգի համեմատութեամբ կ'աճի ու կ'աւելնայ :

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մենանդրի կատակերգութեանց մեացորդները :
(Տես երես 250)

Վանի որ դեռ երիտասարդ ես, մի մոռնար որ օր մը ծեր պիտի ըլլաս :

Սարդ մը չեմ՝ անհար որ իր անձին բարեկամ չըլլայ :

Վեզմէ աւելի տարիք ունեցող մարդկանց ընկերութիւնը սիրէ :

Իմաստնոյն խորհուրդներն ընդունէ :

Սիրէ աշխատութիւնը, և աղէկ կեանք մը կ'անցընէս :

Վու անձիդ վրայ գովեստ մի խօսիր :

Պզտիկ շահերու համար շատ անգամ մարդ մեծ կորուստներու մէջ կ'իյնայ :

Երախտագիտութիւնը բոլորովին վերցուած է մարդկանց մէջէն :

Վեղեցիկ բան է յաղթել իր ախորժակին ու իր փափաքներուն :

Ի՞նչ որ մեռնելէն կը վախնաս, մի հարստնար :